ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» հոկտեմբերի 2014թ. N------Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 10-ի հ.95-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի ընդհանուր բաժնային սեփականությունը համարվող Նոր Նորք վարչական շրջանի, Նորքի 7-րդ միկրոշրջանի հ.41 շենքի հ.28՝ 79.69 քմ մակերեսով բնակարանի իր բաժնեմասը (1/4) (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 21.08.2014թ. հ.21082014-01-0233 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Անահիտ Մանուկյանին և Սուրեն Մանուկյանին։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Անահիտ Մանուկյանը դիմել է Երևանի քաղաքապետարան՝ Նոր Նորք վարչական շրջանի Նորքի 7-րդ միկրոշրջանի հ.41 շենքի հ.28՝ 79.69 քմ մակերեսով բնակարանի 1/4 բաժնեմասն իր և որդու՝ Սուրեն Մանուկյանի անվամբ մասնավորեցնելու խնդրանքով:

Նոր Նորքի վարչական շրջանի Նորքի 7-րդ միկրոշրջանի հ.41 շենքի հ.28 բնակարանը ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանում է Անահիտ Մանուկյանին և Սուրեն Մանուկյանին (հիմք անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 21082014թ. հ.21082014-01-0233 վկայական):

Նշված բնակարանը Երևանի քաղաքապետի 1997 թվականի մարտի 25-ի հ.2380 որոշմամբ տրամադրվել է Նորայր Մանուկյանի ընտանիքին՝ իրեն, վերջինիս խորթ մորը՝ Սաթո Մեժլումյանին, կնոջը՝ Անահիտ Մանուկյանին և որդուն՝ Սուրեն Մանուկյանին: Նորայր Մանուկյանի մահից հետո /հիմք 29.01.2013թ հ.611096 մահվան վկայագիր/ Անահիտ Մանուկյանը և Սուրեն Մանուկյանը հանդիսանալով հանգուցյալի ժառանգներ՝ որպես ժառագություն ընդունել են տվյալ բնակարանի 1/4 բաժնեմասը: Բնակարանի մյուս համասեփականատեր Սաթո Մեժլումյանի մահից հետո /հիմք 04.01.2007թ. հ.121842/ բնակարանի նկատմամբ որևէ իրավական ձևակերպում հնարավոր չի եղել իրականացնել, քանի որ Սաթո Մեժլումյանի և Նորայր Մանուկյանի հոր ամուսնությունը օրենքով սահմանված կարգով գրանցված չի եղել:

Նկատի ունենալով, որ Սաթո Մեժլումյանը ժառանգներ չի ունեցել, նշված բնակարանի բաժնեմասը ճանաչվել է անժառանգ գույք և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1224-րդ հոդվածով սահմանված դրույթների համաձայն՝ բաժնեմասի նկատմամբ ձևակերպվել է Երևան համայնքի ժառանգության իրավունքը, որից ծագող իրավունքը ստացել է պետական գրանցում:

Համաձայն «Նորք 7/5» համատիրության կողմից 02.09.2014թ. տրված տեղեկանքի Անահիտ Մանուկյանը 1988 թվականից փաստացի բնակվում է Նոր Նորք վարչական շրջանի Նորքի 7-րդ միկրոշրջանի հ.41 շենքի հ.28 բնակարանում:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի 03.09.2014թ. հ.ԿԽ-2/5980 և ԿԽ-2/5981 գրություններ՝ Անահիտ Մանուկյանի և Սուրեն Մանուկյանի անվամբ Նոր Նորքի վարչական շրջանի Նորքի 7-րդ միկրոշրջանի հ.41 շենքի հ.28

բնակարան հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ գրանցված է վերջիններիս ընդհանուր բաժնային սեփականության իրավունք, ինչպես նաև իրենց անվամբ Հայաստանի Հանրապետությունում այլ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում և վերջին հինգ տարիների ընթացքում անշարժ գույքի օտարման և ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարված չէ:

Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 10-ի հ.95-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 3-րդ կետի համաձայն՝ Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը կարող է անհատույց օտարվել միայն Երևան քաղաքի ավագանու որոշմամբ, բացառությամբ Ծրագրի 4-րդ կետի:

Ծրագրի 4-րդ կետով նախատեսված իրավական և/կամ փաստական հանգամանքների առկայության դեպքում Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանները, բնակելի տները և բնակելի տարածքները կարող են սեփականության իրավունքով անհատույց փոխանցվել քաղաքացիներին՝ Երևանի քաղաքապետի որոշմամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 10-ի հ.95-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և/կամ փաստական հանգամանքները, ուստի անհրաժեշտություն է առաջացել ընդունելու Երևանի ավագանու համապատասխան որոշում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի ընդհանուր բաժնային սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում։

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի ընդհանուր բաժնային սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջանում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ